



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2003թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում /վերլուծություն/

2003թ. 9 ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 49399 գործարքներ, որոնց քանակը 2002թ. 9 ամիսների համեմատ աճել է 21.9%-ով: 2003թ. 9 ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2003թ. 9 ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. 9 ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. 9 ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 22267 օտարման գործարքների 91.2%-ը կազմել են առուվաճառքները, 8.3%-ը նվիրատվությունները և 0.5%-ը փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների 47.9%-ը արձանագրվել է Երևան քաղաքում և 50.8%-ը բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2003թ. 9 ամիսներին 2002թ. 9 ամիսների համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 19.8%-ով: 2003թ. 9 ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 9594 առուվաճառքի գործարքների 69.2%-ը արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում 2002թ. 9 ամիսների համեմատ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 16.9%-ով:

2003թ. 9 ամիսներին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. 9 ամիսներին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլարով/	
		9 ամիսներ 2003թ.	9 ամիսներ 2002թ.
Կենտրոն	200.0-970.0	376.9	264.8
Արաբկիր	150.0-550.0	269.5	164.3
Քանաքեռ-Զեյթուն	100.0-330.0	161.5	100.2
Նոր-Նորք	90.0-240.0	130.3	95.1
Ավան	90.0-190.0	125.3	85.0
Էրեբունի	80.0-300.0	138.9	91.8
Շենգավիթ	80.0-250.0	136.9	93.9
Դավթաշեն	100.0-250.0	158.7	94.4
Աջափնյակ	80.0-220.0	137.5	87.9
Մալաթիա-Սեբաստիա	90.0-240.0	135.2	90.4
Նուբարաշեն	40.0-100.0	63.1	42.1
Երևան	<b>40.0-970.0</b>	<b>166.7</b>	<b>110.0</b>

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. 9 ամիսներին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները, 2002թ. 9 ամիսների համեմատ աճել են 51.5%-ով:

2003թ. 9 ամիսներին հանրապետության մարզերում գրանցված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2003թ. 9 ամիսներին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 3427 բնակարաններ, որոնց քանակը 2002թ. 9 ամիսների համեմատ աճել է 9.5%-ով:

2003թ. 9 ամիսներին ըստ հանրապետության մարզերի քաղաքների, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում

առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. 9 ամիսների /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/	
			9 ամիսներ 2003թ.	9 ամիսներ 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	61.8	56.6
	Ապարան	18.0-38.0	27.0	25.4
	Թալին	18.0-38.0	24.5	20.7
Արարատ	Արտաշատ	22.0-85.0	53.7	51.5
	Մասիս	20.0-85.0	54.0	48.8
	Վեդի	20.0-45.0	31.0	28.3
	Արարատ	22.0-45.0	31.3	26.8
Արմավիր	Վաղարշապատ	35.0-105.0	81.5	71.4
	Արմավիր	21.0-58.0	44.5	40.6
	Մեծամոր	17.0-50.0	30.6	28.4
Գեղարքունիք	Սևան	20.0-50.0	30.4	29.3
	Գավառ	20.0-45.0	29.9	28.7
	Սարտունի	18.0-35.0	29.1	27.7
	Վարդենիս	12.0-21.0	17.0	16.0
Լոռի	Վանաձոր	30.0-85.0	60.3	56.3
	Ստեփանավան	20.0-45.0	32.1	27.7
	Սյիտակ	17.0-33.0	23.6	21.5
	Այվերդի	17.0-40.0	25.1	22.2
	Տաշիր	15.0-26.0	19.0	17.6
Կոտայք	Աբովյան	40.0-100.0	81.5	76.0
	Նոր Հաճն	35.0-75.0	51.4	49.7
	Բյուրեղավան	17.0-48.0	34.9	31.8
	Եղվարդ	28.0-55.0	40.0	35.8
	Հրազդան	18.0-45.0	30.2	27.2
	Ծաղկաձոր	22.0-95.0	74.9	72.4
	Չարենցավան	13.0-55.0	30.6	26.9
Շիրակ	Գյումրի	30.0-97.0	68.2	59.7
	Արթիկ	17.0-38.0	24.9	22.5
	Մարալիկ	15.0-45.0	23.3	20.4
Սյունիք	Գորիս	21.0-45.0	29.1	26.0
	Կապան	18.0-55.0	28.6	24.9
	Սիսիան	17.0-57.0	27.3	23.2
	Մեղրի	18.0-38.0	25.0	20.9
	Քաջարան	15.0-30.0	17.9	14.5
Վայոց Ձոր	Վայք	15.0-48.0	34.9	30.5
	Եղեգնաձոր	20.0-58.0	46.5	43.4
	Զերմուկ	20.0-55.0	40.3	37.0
Տավուշ	Դիլիջան	15.0-55.0	36.0	31.1
	Իջևան	23.0-50.0	40.1	37.9
	Բերդ	15.0-45.0	28.7	26.1
	Նոյեմբերյան	15.0-45.0	26.7	24.2

2003թ. 9 ամիսներին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների աճը 2002թ. 9 ամիսների կազմել է 9.9% :

2003թ. 9 ամիսներին, մարզերում արձանագրվել են անհատական բնակելի տների 3108 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 828, մյուս մարզերում միասին վերցրած՝ 2280: 2002թ. 9 ամիսների համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 29.6%-ով, այդ թվում, Երևան քաղաքում՝ 16.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 34.9%-ով: Ընդ որում 2003թ. 9 ամիսներին հանրապետության մարզերում գրանցված առանձնատների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

Երևան քաղաքի համայնքներում 2003թ. 9 ամիսներին անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. 9 ամիսներին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/	
		9 ամիսներ 2003թ.	9 ամիսներ 2002թ.
Կենտրոն	200.0-990.0	381.3	270.0
Արաբկիր	160.0-580.0	272.3	167.1
Քանաքեռ-Զեյթուն	110.0-360.0	163.3	102.7
Նորք-Մարաշ	120.0-240.0	288.9	219.2
Ավան	95.0-200.0	126.8	92.3
Էրեբունի	95.0-320.0	140.2	97.4
Շենգավիթ	85.0-260.0	138.1	94.9
Դավթաշեն	100.0-260.0	160.0	95.7
Աջափնյակ	85.0-230.0	139.0	90.8
Մալաթիա-Մերաստիա	95.0-250.0	136.6	94.1
Նուբարաշեն	45.0-110.0	65.2	43.9
Միջինը Երևանում	<b>45.0-990.0</b>	<b>182.9</b>	<b>124.4</b>

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. 9 ամիսներին, անհատական բնակելի տների շուկայական միջին գները 2002թ. 9 ամիսների համեմատ աճել են 47.0%-ով:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. 9 ամիսներին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/	
			2003թ. 9 ամիսներ	2002թ. 9 ամիսներ
Արագածոտն	Աշտարակ	35.0-100.0	81.7	75.1
	Ապարան	20.0-45.0	38.1	34.3
	Թալին	15.0-35.0	27.7	22.9
Արարատ	Արտաշատ	28.0-80.0	61.2	56.3
	Մասիս	27.0-80.0	61.7	58.6
	Վեդի	25.0-60.0	35.8	34.1
	Արարատ	25.0-60.0	36.4	33.7
Արմավիր	Վաղարշապատ	50.0-110.0	85.4	75.0
	Արմավիր	35.0-90.0	51.1	46.6
Գեղարքունիք	Սևան	25.0-60.0	36.1	33.5
	Գավառ	25.0-65.0	39.3	36.7
	Մարտունի	20.0-55.0	33.4	31.0
	Վարդենիս	15.0-45.0	20.7	18.8
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	67.5	63.6
	Ստեփանավան	20.0-50.0	32.8	31.5
	Սյիտակ	17.0-50.0	24.0	21.9
	Ալավերդի	18.0-50.0	25.8	23.3
	Տաշիր	15.0-30.0	19.5	18.3
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	91.0	86.1
	Նոր Հաճն	35.0-80.0	53.6	50.1
	Բյուրեղավան	15.0-50.0	37.7	33.1
	Եղվարդ	23.0-70.0	46.6	42.0
	Հրազդան	25.0-65.0	39.3	35.9
	Ծաղկաձոր	45.0-110.0	84.6	81.4
	Չարենցավան	25.0-50.0	33.0	29.8
Շիրակ	Գյումրի	40.0-110.0	88.9	84.5
	Արթիկ	18.0-55.0	27.9	24.3
	Մարալիկ	15.0-45.0	23.7	21.5
Սյունիք	Գորիս	22.0-65.0	31.1	27.1
	Կապան	25.0-55.0	30.4	27.3
	Միսիան	18.0-50.0	28.0	24.9
	Մեղրի	18.0-40.0	27.8	25.2
	Քաջարան	15.0-30.0	18.7	15.7
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	36.4	31.8
	Եղեգնաձոր	20.0-65.0	48.5	46.2
	Ջերմուկ	25.0-60.0	42.5	38.5
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	38.8	36.0
	Իջևան	30.0-70.0	40.7	39.2
	Բերդ	20.0-50.0	30.5	26.8
	Նոյեմբերյան	20.0-50.0	30.4	28.4

2003թ. 9 ամիսներին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների աճը 2003թ. 9 ամիսների համեմատ կազմել է 8.7%:

2003թ. 9 ամիսներին հանրապետությունում արձանագրվել են հողերի օտարման 4604 գործարքներ, 2092.26 հա /130.06 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 1797.81 հա գյուղատնտեսական նշանակության: Ընդ որում, 2059.97 հա /128.29 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են առուվաճառքի, որից 1776.89 հա գյուղատնտեսական նշանակության, 28.74 հա /1.36 հա Երևանում/ նվիրատվության, որից 18.18 հա գյուղատնտեսական նշանակության և 3.55 հա /0.41 հա Երևանում/ փոխանակման, որից 2.74 հա գյուղատնտեսական նշանակության, գործարքներ:

Առավել մեծ մակերեսով հողեր են վաճառվել Գեղարքունիքի մարզում՝ 483.43 հա, որից 472.13 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր՝ 3.97 հա, Տավուշի մարզում, որից 3.39 հա գյուղատնտեսական նշանակության:

Ստորև ներկայացվում է 2003թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	գյուղատնտես. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				գյուղատնտես. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	239	16.06	198	59.39	0	0.00	361	25.05	99	20.35
Արագածոտն	58	65.29	32	3.82	0	0.00	187	141.10	79	8.35	1	0.50
Արարատ	12	47.53	68	7.07	7	0.18	608	198.60	224	19.35	5	0.13
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	373	366.74	133	12.32	7	1.17
Գեղարքունիք	23	160.80	1	1.00	2	3.30	179	311.33	32	3.63	2	1.91
Լոռի	0	0.00	14	1.33	0	0.00	100	79.60	19	2.91	4	0.83
Կոտայք	14	9.50	284	25.69	6	15.41	310	112.87	364	35.71	1	0.19
Շիրակ	0	0.00	1	0.05	1	0.13	196	213.04	50	2.31	7	0.24
Սյունիք	1	1.00	0	0.00	0	0.00	28	22.37	5	0.40	1	0.40
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	2	0.45	39	43.72	10	0.97	1	0.50
Տավուշ	0	0.00	0	0.00	1	0.06	7	3.39	8	0.47	1	0.01
<b>Ընդամենը</b>	<b>108</b>	<b>284.12</b>	<b>639</b>	<b>55.02</b>	<b>217</b>	<b>78.02</b>	<b>2027</b>	<b>1492.76</b>	<b>1285</b>	<b>111.47</b>	<b>129</b>	<b>26.23</b>

2003թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում հանրապետությունում արձանագրվել են հողերի 4437 առուվաճառքի գործարքներ, որից 2135-ը՝ գյուղատնտեսական, 2277-ը՝ բնակավայրերի, 25-ը՝ արդյունաբերական օբյեկտների:

2003թ. հունվար - սեպտեմբեր ժամանակահատվածում հողերի առուվաճառքներից 685-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 172-ը՝ /19.63 հա/ Երևանում, իսկ 513-ը՝ /327.95 հա/ մյուս մարզերում: Աճուրդային կարգով վաճառված հողերից 108 միավորը /284.12 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական, 537-ը՝ /47.18 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/, 37-ը՝ /4.65 հա/ հասարակական կառուցապատման և 3-ը՝ /1.55 հա, Կոտայքի մարզում/ արդյունաբերական օբյեկտների:

2003թ. հունվար- սեպտեմբեր ժամանակահատվածում հանրապետությունում վաճառված 25 միավոր արդյունաբերական օբյեկտների հողերից 1 միավորը

գրանցվել է /0.90 հա/ Արարատի, 4-ը /1.46 հա/ Գեղարքունիքի, 4-ը /1.63 հա/ Կոտայքի, 1-ը՝ Տավուշի /0.04 հա/ մարզերում և 15-ը՝ /6.88 հա/ Երևանում: 2003թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում Երևանում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 7 գործարքներ:

2003թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 2135, այդ թվում աճուրդ-վաճառքների 108 և դատարանի վճռով 14 /վերջիններս ստորև ներկայացված աղյուսակում ընդգրկված չեն/ գործարքներ, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1հա մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսատղ գյուղ.նշ. հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսատղ գյուղ.նշ. հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	58	65.29	130.0	1960.0	1250.0	153	61.21	840.0	7600.0	2275.0
Ապարան						17	9.94	130.0	1150.0	300.0
Թալին						10	46.67	200.0	1680.0	350.0
Ծաղկահովիտ						7	23.29	170.0	2100.0	295.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	12	47.53	130.0	1180.0	323.0	326	89.34	740.0	10000.0	2015.0
Մասիս						88	25.20	400.0	5600.0	1015.0
Վեդի						191	83.42	450.0	7200.0	1135.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						95	64.55	650.0	4650.0	1235.0
Բաղրամյան						103	195.84	130.0	1000.0	390.0
Վաղարշապատ						172	104.69	980.0	11150.0	2105.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	1	10.0	145.0	145.0	145.0	14	4.68	420.0	1100.0	630.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի	1	3.00	360.0	360.0	360.0	1	0.30	100.0	4000.0	475.0
Սևան						1	0.25	100.0	1000.0	405.0
Վարդենիս	21	147.80	362.0	364.0	363.0	163	306.10	60.0	1180.0	230.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						29	20.77	360.0	5500.0	790.0
Գուգարք						10	2.72	500.0	6000.0	1180.0
Սպիտակ						2	1.04	500.0	3300.0	1070.0
Ստեփանավան						22	18.29	180.0	4000.0	325.0
Տաշիր						29	33.57	100.0	400.0	235.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	7	4.03	95.0	1445.0	626.0	159	43.86	520.0	10100.0	3890.0
Եղվարդ	5	5.00	825.0	825.0	825.0	119	48.46	380.0	6100.0	2130.0
Հրազդան	2	0.46	880.0	880.0	880.0	32	20.56	250.0	4000.0	715.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						150	124.39	550.0	760.0	650.0
Ամասիա						16	41.50	80.0	525.0	204.0
Անի						22	40.55	240.0	800.0	280.0
Աշոցք						3	2.03	60.0	210.0	130.0
Արթիկ						5	4.57	140.0	2300.0	380.0

Սյունիքի մարզ										
Գորիս								200.0	1600.0	408.0
Կապան	1	1.00	256.0	256.0	256.0	1	1.76	120.0	2000.0	330.0
Մեղրի						3	0.82	400.0	4240.0	874.0
Սիսիան						24	19.79	90.0	1500.0	245.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						30	23.20	260.0	4000.0	1000.0
Վայք						9	20.52	120.0	3400.0	385.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	2000.0	460.0
Իջևան						5	1.59	530.0	4000.0	1100.0
Նոյեմբերյան						2	1.80	100.0	8340.0	700.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2003թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 1324 առուվաճառքի գործարքներ, այդ թվում աճուրդ-վաճառքների 398, ուղղակի վաճառքի 2 և դատարանի վճռով 1 /վերջիններս ստորև ներկայացված աղյուսակում ընդգրկված չեն/ գործարքներ, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով ներկայացվում են

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	32	38200.0	44.0	64.0	63.0	73	72740.0	120.0	3800.0	2265.0
Ապարան						5	10140.0	120.0	670.0	310.0
Թալին						1	570.0	78.0	440.0	125.0
Ծաղկահովիտ								78.0	180.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	36	38500.0	88.0	1060.0	395.0	49	46792.0	175.0	2460.0	650.0
Մասիս	32	32205.0	110.0	170.0	120.0	135	105620.0	270.0	3680.0	825.0
Վեդի						40	41084.0	115.0	1000.0	500.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						36	39953.0	180.0	2440.0	700.0
Բաղրամյան						5	6000.0	120.0	280.0	200.0
Վաղարշապատ						92	77289.0	280.0	3700.0	1300.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						19	22564.0	180.0	1000.0	520.0
Ճամբարակ	1	10000.0	112.0	112.0	112.0	3	3600.0	78.0	180.0	140.0
Մարտունի						10	10155.0	120.0	320.0	223.0
Սևան								120.0	1000.0	215.0
Վարդենիս								78.0	180.0	120.0



Լոռու մարզ										
Ալավերդի						2	5900.0	78.0	440.0	200.0
Գուգարք						9	13736.0	78.0	3800.0	600.0
Սյիտակ	9	11250.0	77.0	77.0	77.0	1	1530.0	78.0	450.0	160.0
Ստեփանավան	5	2000.0	103.0	103.0	103.0	6	7102.0	78.0	340.0	140.0
Տաշիր						1	840.0	78.0	180.0	130.0
Կոտայքի մարզ										
Արուլյան	85	69835.0	27.0	943.0	160.0	216	199908.0	180.0	4300.0	1515.0
Եղվարդ	194	180800.0	67.0	296.0	156.0	118	133734.0	180.0	3670.0	2000.0
Հրազդան	4	4800.0	109.0	111.0	110.0	29	22923.0	180.0	4120.0	1320.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						50	23056.0	120.0	2500.0	426.0
Ամասիա								78.0	180.0	135.0
Անի								120.0	430.0	190.0
Աշոցք								78.0	120.0	110.0
Արթիկ								120.0	440.0	190.0
Սյունիքի մարզ										
Գորիս						2	920.0	78.0	670.0	385.0
Կապան								78.0	1000.0	390.0
Մեղրի								78.0	450.0	230.0
Սիսիան						3	3080.0	78.0	450.0	230.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						9	9152.0	78.0	990.0	295.0
Վայք						1	500.0	78.0	1000.0	215.0
Տավուշի մարզ										
Բերդ								78.0	670.0	170.0
Իջևան						8	4680.0	78.0	1600.0	410.0
Նոյեմբերյան								78.0	670.0	210.0

2003թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 82 գործարքներ 91.11 հա մակերեսով, ընդ որում 9-ը՝ Երևանում /0.44 հա/, 30-ը՝ Արարատի /10.36հա/, 14-ը՝ Արմավիրի /36.00 հա/, 8-ը՝ Գեղարքունիքի /9.02 հա/, 12-ը՝ Շիրակի /32.86 հա/ , 2-ը՝ Սյունիքի /0.40 հա/, 5-ը՝ Վայոց Ձորի /1.54 հա/ և 2-ը՝ Տավուշի /0.79 հա/ մարզերում: Միաժամանակ փոխանակյալ կառուցված շենքեր, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ օրենքի կիրարկման արդյունքում հանրապետության 447 համայնքներում քաղաքացիներին անհատույց տրամադրվել են 448964 միավոր 49991.47 հա ընդհանուր մակերեսով տնամերձ և գյուղատնտեսական նշանակության հողամասեր:

2003թ. 9 ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4311 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.7%-ը: 2002թ. 9 ամիսների համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 3.6%-ով: 2003թ. 9 ամիսներին հանրապետության մարզերում վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2003թ. 9 ամիսներին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 284 բնակարանների, 95 բնակելի տների, 1054 հասարակական, 80 արտադրական նշանակության օբյեկտների, 9 ավտոտնակների, 1 այգետնակի և 2788 հողերի վարձակալության գործարքներ:

2003թ. 9 ամիսներին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 748 վարձակալության գործարքների քանակները 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 32.6%-ով:

Նախորդ տարիներից առ 2003թ. հոկտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում հանրապետությունում շարունակվում են 112482 հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալություններ, որից 62623 հա՝ համայնքների վարչական սահմաններից դուրս, իսկ 49859 հա՝ սահմանների ներսում գտնվող հողամասերի նկատմամբ:

2003թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում հանրապետությունում վարձակալվել են 18285.91 հա ընդհանուր մակերեսով հողեր /268.97 հա Երևանում/: Մյուս մարզերում վարձակալված հողերից 17122.43 հա կազմում են գյուղատնտեսական /որից 1142.27 հա նախկին պահուստային/, 756.72 հա բնակավայրերի, 0.15 հա տրանսպորտային, 137.63 հա արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արարատի մարզում՝ 5989.07 հա , որից 5892.53 հա գյուղատնտեսական նշանակության հողեր: Իսկ առավել փոքր մակերեսով հողեր վարձակալվել են Տավուշի մարզում՝ 81.77 հա, որից 75.51 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 8013.82 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2003թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ. նշ. հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ. նշ. հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	9	956.00	151	1256.78
Արարատ	22	4724.00	277	1168.53
Արմավիր	0	0.00	55	1224.03
Գեղարքունիք	22	1770.90	285	2644.99
Լոռի	5	139.00	56	159.32
Կոտայք	4	320.00	230	649.06
Շիրակ	0	0.00	147	1386.34
Սյունիք	5	103.92	89	339.26
Վայոց Ձոր	0	0.00	59	204.80
Տավուշ	0	0.00	22	75.51
<b>Ընդամենը</b>	<b>67</b>	<b>8013.82</b>	<b>1371</b>	<b>9108.62</b>

2003թ. 9 ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3130 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.3%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2002թ. 9 ամիսների համեմատ աճել է 42.1%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 5.1%-ը իրականացվել են իրավաբանական անձանց կողմից, իսկ գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /40.9%/, հասարակական նշանակության օբյեկտների /20.3%/, առանձնատների /13.5%/ և հողերի /19.6%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1628 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2002թ. 9 ամիսների համեմատ աճել է 33.0%-ով:

Ընդհանուր առմամբ, 2003թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում հանրապետությունում գրավադրվել են 371.53 հա մակերեսով հողեր /1.66հա Երևանում/, որից 367.52 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 213.76 հա, որից 212.86 գյուղատնտեսական նշանակության:

2003թ. 9 ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների մասնավորեցման /ապապետականացման միջոցով/ համապատասխանաբար, 180 և 55 գործարքներ, որոնց ընդհանուր քանակը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.5%: 2003թ. 9 ամիսներին հանրապետության մարզերում մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

2002թ. 9 ամիսների համեմատ մասնավորեցման գործարքների քանակը 2003թ. 9 ամիսներին նվազել է 42.0%-ով: 2003թ. 9 ամիսներին մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 26.8%:

2003թ. 9 ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի առաջնային գրանցումների 7034 գործարքներ, որոնց քանակը 2002թ. 9 ամիսների համեմատ աճել է 37.4%-ով, :

Առաջնային գրանցումների տեսակաբար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.2%: Քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /43.8%/: Ընդ որում առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

## ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***